

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՀԴ Բիւրոյի անդամ, Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանի Լոս Անջելոս կատարած կարճատեւ այցի շրջանակում, ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային կապի յանձնախմբի կազմակերպութեամբ Կիրակի, Դեկտեմբերի 16-ի երեկոյեան ժամը 7-ին Կենտրոնական Կոմիտէի «Փեշքերեան» սրահում տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում, որին ներկայ գտնուեցին գաղութիս մտաւորական շրջանակների եւ մամուլի շուրջ 50 ներկայացուցիչներ: Հանդիպման բացումը կատարեց Հանրային կապի յանձնախմբի ատենապետ Պետիկ Թաշճեանը, որը ողջունելով ներկաներին, յայտնեց, որ յանձնախումբը սոյն հանդիպումը կազմակերպել էր, որպէսզի մամուլի ներկայացուցիչներն ու մեր մտաւորական շրջանակները հնարաւորութիւն ունենան հարցեր ուղղելու նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանին՝ 2008 թուականին կայանալիք նախագահական ընտրութիւնների առնչութեամբ: Այդ իմաստով նա խնդրեց, որ Վահան Յովհաննիսեանը որոշ տեղեկութիւններ յայտնի այն մասին, թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը որոշեց սեփական թեկնածուով մասնակցել սոյն ընտրութիւններին:

Շնորհակալութիւն եւ ուրախութիւն յայտնելով ստեղծուած առիթի համար, Վահան Յովհաննիսեանը անդրադարձաւ Հայաստանի ներկայիս քաղաքական իրադրութեանը եւ կարեւորեց այդ մասին Սփիւռքի հայութեանը իրազեկ պահելու հանգամանքը: Ծանրանալով 1998 թուականից յետոյ զարգացող քաղաքական իրադարձութիւնների եւ խորհրդարանական ընտրութիւնների եւ վերջին տասնամեակում ձեւաւորուած համախոհական եւ համագործակցական իշխանութիւնների գործունէութեան վրայ, Վահան Յովհաննիսեանը մասնաւորաբար նշեց, որ խորհրդարանական վերջին ընտրութիւններից յետոյ, Դաշնակցութիւնը հաւանական նկատեց, որ երկրում կարող է ստեղծուել կենտրոնացեալ իշխանութիւն: «Խորհրդարանում մէկ ուժ ծանրակշիռ մեծամասնութիւն է», - շեշտեց Վահան Յովհաննիսեանը եւ աւելացրեց, որ «կառավարութիւնը բնականաբար Սահմանադրութեամբ խորհրդարանի կողմից ստեղծուած նոյնպէս այդ ուժի գերակշռութեան տակ է լինելու, եւ եթէ նախագահն էլ է դառնում այդ ուժի ներկայացուցիչը, Հայաստանը կարող է կրկնել սովետական տարիների Արեւելաեւրոպայի սոցիալիստական պետութիւնները, որոնք եւրոպական լինելով փորձում էին բազմակուսակցութեան այսպիսի մի արւեստական շղարշ ստեղծել՝ եւրոպայի աչքին թոզ փչելով, թէ իբր բազմակուսակցական համակարգեր են: Հիմա Հայաստանում նման մոդելի կրկնութեամբ, մենք լուրջ վտանգ ենք տեսնում, ընդ որում, ասածիս մէջ մեղադրանք՝ ինչ-որ քաղաքական ուժի կամ քաղաքական անհատի-անհատների չկայ, որովհետեւ նման վիճակը նրանց կամքից անկախ կառաջանայ: Նրանք կարող են ամենադրական, ամենալաւ ցանկութիւնները ունենալ, սակայն քաղաքական խաղի կանոնները դրանց հնարաւորութիւնը չեն տայ, որովհետեւ այն ուժերը, տնտեսական այն ուժերը, որոնք այդ քաղաքական ուժը եւ դրա ղեկավարներին բերել են իշխանութեան, նրանք պարտադրելու են իրենց պայմանները եւ մենաշնորհը, որոնք տնտեսական ոլորտում Հայաստանում ցաւոք սրտի հաստատուել ու

զարգանում են եւ սահուն կերպով անցնում են դէպի քաղաքական ասպարէզ եւ եթէ քաղաքական ասպարէզում էլ մեանշնորհեալ իշխանութիւն ձեւաւորուեց, ապա Հայաստանի զարգացման հեռանկարները իսկապէս կը դառնան սահմանափակ»,- հաստատեց Վահան Յովհաննիսեանը եւ այնուհետեւ անդրադառնալով Հայաստանի քաղաքական ու հասարակական կեանքում ՀՀ Դաշնակցութեանը տրուող նշանակութեանը, ասաց, որ Հայաստանում «Այսօր ժողովուրդը նայում է, որ Դաշնակցութիւնը տասը տարի է, որ իշխանութեան մէջ է: Հիմա, մի հատուածում քիչ, մի հատուածում շատ , որոշ կառավարութիւնների հետ չենք համագործացկել, որոշ կառավարութիւնների հետ ակտիւ ենք համագործացկել, բայց նախ՝ ա) Դաշնակցութիւնը պետական կուսակցութիւն է այլեւս եւ արդէն քանի տարի է, որ խորհրդարանում կայ: Առաջարկել է տրամաբանական ճիշտ օրէնքներ: Պայքարել է եւ այդ օրէնքները անցկացրել է: Այդ օրէնքները օգուտ են բերել ժողովրդին եւ կարելի է այդ օրէնքները տասնեակներով թուել: Եւ բ) այս ընթացքում, ձեռք է բերել զգալի, նկատելի կառավարման փորձ: Հիմա ժողովուրդը տեսնում է, որ ունենք այդ փորձը: Ուրեմն այս առումով, վստահելիութեան եւ հեղինակութեան նկատելի աճ ենք մենք տեսնում»,- նշեց Վահան Յովհաննիսեանը եւ դիտել տուեց, որ անցնող տարիներին ժողովուրդը ինքը բարձրօրէն արժեւորեց Դաշնակցութեան նորամուծութիւնները երկրի քաղաքական, ընկերային ու տնտեսական բոլոր ոլորտներում: «Մենք դեռ քաղաքական այլ հետաքրքիր նորամուծութիւններ եւս ծրագրել ենք, որոնք կը տեսնէք նախագահական այս ընտրարշաւներում եւ ես կարծում եմ, որ մենք իսկապէս պայքարելու ենք մինչեւ վերջ: Այսինքն նրանք, ովքեր մտածում են, որ Դաշնակցութիւնը հաւանաբար ինչ-որ պայմանաւորուածութիւն ունի, տակից սրան է օգնելու, նրան է օգնելու, թող չխաբւուեն յանկարծ: Նման բան չկայ եւ չի լինի: Դա ասելով չի, կը համոզուէք: Մեզ համար կարելոր է նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան յաջորդ նախագահը, ով էլ որ լինի, իր ընտրութեան համար պարտական պիտի լինի ընտրողներին՝ ժողովրդին, այլ ոչ թէ ինչ-որ թայֆաների, գողային թայֆաների, որոնց եթէ պարտական մնաց, ընտրուելուց յետոյ ոչ մի բան էլ չի կարողանալու փոխել, ինչքան էլ, որ ինքը անձամբ լաւը լինի»,- յայտարարեց Հայաստանի նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը եւ իր ելոյթից յետոյ պատասխանեց ներկաների հարցումներին, որոնք հիմնականում վերաբերում էին Հայաստանում կաշառակերութեան կասեցմանը, անպատժելիութեան վերացմանը, ուժային կառոյցների եւ կարգ ու կանոնի հաստատմանն ու օրէնքի գերիշխանութեանը: Հանդիպումը փակ յայտարարուեց երեկոյեան ժամը 9:15-ին:

ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակ
ARF Central Committee Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059 Fax: (818) 243-1467